

# ԱՆՄԱՀ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ ՄԻ ՆՇԽԱՐ՝ «ԱՅՍՕՐ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԱՒԱԶԱՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ»

*«Էջմիածին» ամսագրի սույն համարում սիրով և երախտագիտությամբ հրատարակում ենք անմահ Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության սրբազան մի նշխարը, Ավագ Հինգշաբթի օրը, Ոտնալվայի արարողության ժամանակ երգված «Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան» շարականի դաշնավորումը։*

*Եկեղեցական այս խորապես տպավորիչ խմբերգը հիշողությամբ գրի է առել և Հայաստան է ուղարկել Փարիզից Կոմիտաս վարդապետի աշակերտ և նրա երկերի փարիզյան հրատարակությունների բազմաշխատ խմբագիր, երգահան, երաժիշտ Վարդան Սարգսյանը։*

*Հարգելի արվեստագետը Կոմիտասյան այդ դաշնավորումը Մայր Հայրենիք ուղարկելիս իր նամակում գրում է հետևյալը.*

*«Ներփակ Ձեզ կղրկեմ Վարդապետին եկեղեցական մեկ խմբերգը՝ «Այսօր կանգն'ցաւ աւազան մկրտութեան», որ վերջին մասունքն է իմ ունեցածներուն։ Զայն գրի առած եմ հիշողությամբ, այսինքն մեր Պոլսո խումբի երկսեռ փորձերուն ընթացքին,— բացի իմ երգած* տենորի *բաժինեն,— ուշադրությունս յարելով միւս ձայներու բաժիններուն վրա՝* սոպրանի, ալտի, պասի *ու տեղնուտեղը ձայնագրելով զանոնք։ Թերեւս ասոր բնագիրը ունիք Ձեր արխիվներուն մեջ և ուրեմն կրնաք բաղդատել իմ գրի առածին հետ։ Իսկ եթե չունիք, այդ պարագային ներփակ ղրկածս կստանա թանկագին արժեք, որպես միակ օրինակ։*

*... Շատ գեղեցիկ է մշակումը և խորապես տպավորիչ, հատկապես խումբով երգվելու պարագային...»։*

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# «ԱՅՍՕՐ ԿԱՆԳՆԵՑԱՒ»

ՇԱՐԱԿԱՆ ԸՆԹՐԵԱՑ ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹՈՒ

Գրի առաւ ու դաշնակեց
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ




Coro